

ԳԷՈՐԳ ԴՊԻՐ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
(ՊԱԼԱՏԵՑԻ)  
ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ

(Շար., տես «Բազմավեպ», 1982, 1-2, էջ 96-154)

ԳԷՈՐԳ ԴՊԻՐ ՊԱԼԱՏԵՑԻԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒՆ ՀԵՏ

1.

Գերապատիւ երկուց հարազատաց պարկեշտասուն եւ առաքինի կրօնաւորաց Աղէքսանդրոս եւ Ղուկիոս կոչեցելոց ողջոյն խնդաւէտ ընծայի ի Տէր<sup>1</sup>

Յետ որոյ յայտ լիցի յարդութեան ձերում, զի որովհետեւ յազնուազարմ եւ բարեպաշտօն հօրէն ձերմէ, ի Պօղոս Աղայէն՝ խնդրեալ էիք զՊատմագիրքն Եղիշէի Հայոց Վարդապետի, նմին իրի եւ նա եպիտ եւ զնեաց ձեռամբ իմով, վասն որոյ եւ իմ ասացեալ նմա՝ առի պէրքն գայն, եւ ի Եղիշէի իմմէ փոխեցի ի ըուսանցս դորին զմեկնութիւնս ոմանց բառից, որք չեն մեր՝ ալլ օտար աղբաց եւ մանաւանդ պարսից, զոր ընկալեալ ընթերցջիք եւ հաճեցարուք ընդ դոյրն վաստակ աշխատութեան մերոյ:

Ընդ զմին նաեւ զուգայարեցի յինէն ձեզ ընծայ ի յիշատակ, զձեռագիր Ատեմալսօսութեան գիրքն Ներսէսի Լամբրօնացւոյ, եւ զոր ի հնագոյն իմն օրինակէ գաղափարեալ էի<sup>2</sup>, յօժարական սիրով ձօնեցի ձեզ, որ եթէ ընդ տպելոյն եւ կամ ընդ աղծատ ձեռագրաց համեմատեցի, շատ բացայայտ եւ պայծառ միտս արտայայտէ, եւ յայնժամ ճանաչի թէ որչափ ընտիր է ձեռագիրս, եւ թէպէտ յուսամ թէ գոն առ ձեզ ի սուրբ մենաստանիդ՝ սորա հնագոյն օրինակքն, սակայն զի՞նչ վնաս իցէ, եթէ եւ այս մի վաղնջական գիրքս եւս ի նոյնս յաւելցի: Ուրեմն ընկալարուք սիրով, եւ զնուաստս ի ձեր մաքրամտոյց աղօթս յիշեցէք:

Իսկ զկնի այսր եւ ես ի ձէնջ հայեմ զիր ինչ, զորոյ առնելն ի ձեր խոհականութիւնն առնեմ ապաստան: Արդ գիտեմ ես զի զոյ առ

ձեզ ի սուրբ մենաստանիդ ի գրատան ձերում՝ Գիրքն Պատմութեան Յոռանմու Հայոց Կաթողիկոսի, արդականին Մաշտոց Վարդապետի, որ վիպէ գիտութողիկոսաց եւ զթաղաւորաց Հայոց եւ զայլոց ոմանց իրակութեանց, սկսեալ յերկնասահան ջրահեղձոյց աւուրցն, եւ աւարտեալ քերեալ հասուցեալ՝ մինչեւ ի յիւր ժամանակս: Եւ զսոյն պիրքս ես ունիմ, քայց լթերատ է ի միջոյն, զոր օրինակեալ եմ ի վաղնջական ձեռագրէ իմեքէ, զորոյ զպական ասացից ձեզ, եւ դուք միայն զպականորդն լցէք անթերի, զգուշագոյն գրութեամբ, եւ յղեցէք առ հայրն ձեր յարդելի, զի եւ նա ինձ տացէ: Եւ զլինելն սորին ի վնաս ձեր, պիտացի ի յոմանց վկայութեանց առքերելոց ի մեկնութիւնս ոմանց բառից ի մէջ հատորոց պատուական եւ աննման բառարանացն մերոց, վասն որոյ եւ վստահացայ գրել առ ձեզ. ի զիպուած Եղիշէեան Պատմագրքիս, գեղեցիկ իմն պատկան գտեալ ժամանակ, եւ վասն ոչ ճրի աշխատ առնելոյ զձեզ՝ կանխեցի եւ յղեցի զդրչապիր օրինական Ատեմալկան յօսիցն Սուրբ Հօրն մերոյ Ներսէսի Լամբրօնացւոյ, ի փոխարինումն վաստակոց ձերոց, թէպէտ յոյժ նուազ է իմն քան զձերն:

Ողջ լերուք ի շինութիւն տառապեալ աղբիս եւ ի պարծանս հիքոյս

Գեորգայ քարմատարի  
Կոստանդնուպօլսեցւոյ

Ի Կոստանդնուպօլսիս  
Յամի Տեառն 1776. Յունլ. ա.

(Յ. Գ.)

Գերյարդելի եւ ամենապատիւ Արքայ Հօրն եւ այլոց հրեշտակակրօն Հարց՝ համբուրեմ ըղձիւ զՍուրբ Աջսն եւ հայեմ զաղօթս նոցին:

- 1. Աղեքսանդր եւ Ղուկիոս ինճիճեան եղբայրներն են, որոնցմէ երկրորդը կրօնաւորական ուխտագրութեամբ փոխած է անունը եւ եղած Ղուկաս:
- 2. Գէորգ Դպիր անձամբ օրինակած է Ներսէս Լամբրոնացիի Ատեմալանութիւնը, 1332 թուակիր ձեռագիրէ մը: 1787ին բուն ձեռագիրը զրկած է վեներիկ:

2.

Յարգոյ եւ պատուական հարազատ եղբարց Աղէքսանդր եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց ի Տէր խնդալ

Յետ սիրոյ ողջունիս յայտ լիցի յարդութեան ձերում, զի ի վերջին աւուրս ամսեանն Սեպտեմբերի՝ ընկալեալ մեր ի ձեռաց յարդելի հօր ձերոյ Պօղոս Աղային զգիր սիրոյ ձեր(ոյ), մեծապէս ուրախացաք, մանաւանդ իբրեւ ընթերցեալ տեղեկացաք՝ եթէ ընծայական տետրակքն ի մէնջ առ յարդութիւն ձեր առաքեալ, անպակաս հասին ի ձեռս ձեր, յորոյ վերայ վարկանիմ թէ եւ դուք ուրախ եղէք,

որպէս իսկ ի բանէ գրոյն ձերոյ երեւէր: Քանզի դուք միայն դտանիք ի նսեմացեալ ժամանակիս, դասք Մխիթարեան երջանիկ կրօնաւորաց, որ կարէք ճանաչել զգլխն եւ զարժողութիւնն այդպիսի ըստուգազիր տառադժութեանդ. վասն որոյ և զտրիտուր փոխադարձին խոստացեալ էիք յուղարկել առ մեզ, որպէս իսկ թազում աղերսանօք խնդրեալ էաք մեք ի ձէնջ: Յոյր սակս եւ մեք կրկին անգամ ի նշան մտերիմ սիրելութեան մերոյ, զայլ միւս գիրք, որ կոչի՝ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ Մեծիմ հոստովու Անճեւացեաց Եպիսկոպոսի, հայելով ի գրչագիր օրինակ ինչ վաղնջական եւ ըստոյք՝ նմանագրեցաք, եւ զտպեալն յար եւ նման ձեռագիր գաղափարին արարաք, եւ տուաք հօր ձերում Պօղոս Աղային, առն պատուականի, իբր զի առ ձեզ հասուցէ: Յորոյ ժամանելն առ յարգութիւն ձեր, մինչ համեմատէք ընդ տպեալ գաղափարին՝ զոր ունիք, յայնժամ յաւապէս ծանուցեալ լինի ձեզ, թէ որչափ մթին, մուսյլ եւ խաւարած է տպեալն, որոյ գրիչք եւ տպագրողքն ի բազում տեղիս զմիտս քանին կորուսեալ եւ խանգարեալ են եւ քան պակասեցուցեալ եւ յանկեալ են, եւ ըստ հաճոյից սրբադրեալ:

Արդ՝ ի վախճան բանիս աղաչեմ զպատուականութիւն ձեր, զի ընկալիք սիրով զսոյն ի ձէնջ նուաստից առ ի յիշատակ, եւ յաւելուցուք ի թիւս գրոց աստուածապահ գրատան օրհնեալ մեծաստանիդ, եւ որջ լիջիք յամայր ամս ի շինութիւնն եւ ի շահ հայասեռ դրոհիս եւ ի պարծանս աննախանձ բարեսիրաց եւ յաւէտ յիմս, որ եմ

Ննչին ծառայ Տեառն

Գեորգ Տէր Յօսեփիսեան  
Կոստանդնուպօլսեցի

Ի Ըստամպօլ

Յամի Տեառն 1776, Հոկտեմբերի 4

(Յ. Գ.)

Ընկալայ զայլ միւս գիր ի յարգութենէ ձերմէ առ նուաստութիւն մեր յատկապէս յղեալ, ի միջին աւուրս Հոկտեմբեր ամսոյն, սեթեւեթ ճարտարակեալ եւ մարգարտաչար, վասն որոյ շնորհակալ լինիմ զձէնջ, որ զմեզ արժան համարեցաք աջադունակ դրով որջունել, յորոյ եւ վերջն վասն Յառաջարկութեան Պատմական գրոյն՝ այնորիկ գրեալ էիք մեզ՝ գրել եւ յղել առ ձեզ: Բայց ծանիցէ պատուականութիւն ձեր, զի եւ ի մերումս չիք այն ձեր ասացեալ Յառաջարկութիւնն, քանզի ես զսոյն ի հնագոյն գրչագրէ իմեքէ, որ թափեալ եւ քրքրեալ էր՝ օրինակեալ եմ, այնքան գտեալ ի նմա՝ որքան եւ գրեալ ծանուցի. սակայն ի յրեզն ձերում զձերն՝ որչափ եւ զտանիցի առ ձեզ, կիսակատար կամ թէ կատարեալ, յետ այնր կարելի է ինձ ի խորջ եւ ի խնդիր անկանիլ եւ գտանել, քանզի ծառայ

ձեր զմեծ փոյթ ունի ի գիւտ եւ ի շահածութիւնն բանից նախնի Հարանց եւ վաղնջական ծերունեացն, իբր զի ի յաւարէ է զոյս ածցին. որջ լերուք:

Ի Հոկտեմբերի 14

1. Խօսքը Յովհաննէս Կթղ. Իրասխանակերտցիի Պատմութեան «Յառաջարկութեան» մասին է, որու պիտի հանդիպի 1782ին կատարած ուղեւորութեան ընթացքին, եւ օրինակելով պիտի զրկէ վննետիկ:

3.

Յարգելի փրկուց հարազատ եղբարց, Աղեքսանդր եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց, ի յուսաւոր քաւիղն Յիսուսի ուղեւորելոց, որջոյն խնդաւէտ ընծայի ի Տէր

Ձկնի հարցումն առնելոյ սակաւուք զորպիսութենէ ձերմէ սիրալիր բանիւք, յայտ լիցի յարգոյ եւ պատուական անձանցդ, զի կեկեալ ժամանեալ Կհաս առ իս հայցեալն յինէն եւ խոստացեալն ի ձէնջ մեզ ի պարգեւ, այս է Պատմական մատեանն Յովհաննէս Հայոց Կաթողիկոսին, յամի Տեառն 1777 Յունվարի 12. որով մեծապէս ուրախ արարիք զհէքս եւ զուարճացուցիք քաղցրութեամբ ձերով, վասն որոյ եւ ես ոգւով չափ ջանացայց՝ ունեցէ կերպիւ պարտավճար լինել ըստ իմում կարի, զանտես զանգիւտ օրինակս գրոց մերային դըպրաց, եւ կամ իսկ զուղիղ գրութիւնս առձեռն յաճախելոց, բերել ի ձեռս, օրինակելով կամ ուղղագրելով, եւ այնպէս զձեզ նոցին վայելմանն հաղորդս առնել, որպէս իսկ ի թղթի՝ զոր նախ քան զայս գրեցի՝ ի նմին ծանուցեալ իրազեկ արարի, որ վասն գրոց Մեկնութեան ժամակարգութեան Հայոց, զոր արարեալ է Տեառն հոստովու Անճեւացեաց Եպիսկոպոսի, զոր ի վաղնջական եւ թազմամեայ օրինակէ ինչ՝ ոչ դոյզն տընութեամբ հանի ի տպեալն, եւ նոյնացուցեալ նմանագրեցի զաղաւաղ տպեալն, եւ գրչագրին յար եւ նման արարեալ ուղղագրեցի, մինչեւ ցնչանախեցան, եւ եղեալ ի ճանապարհ՝ առաքեցի առ ձեզ յանուն ձեր, յիշատակ գրատան սուրբ վանացդ, զոր առեալ վարելիս չիք՝ միաբանական դասք յուսաչաւիղ կրօնաւորաց միախոհ, միեղէն, միակրօն Մխիթարեան օրհնեալ մեծաստանիդ: Զայդպիտի պատուական գիրք՝ յարգոյ Եպիսկոպոսին Խոստովու, ի բազում եկամուտ վրիպանաց գերծեալ եւ ի շատ սրտտոր իմացուածոց պարգեալ, ձերումդ պատուականութեան արժանաւոր ընծայ վարկուցեալ հիբոյս, զոր արդ արհաւասիկ նուիրեցի ձեզ սիրով բազմաւ, զոր իբրեւ կարգայցէք, յոյժ բարուք ապա յայնժամ ծանուցեալ լիցի զին արժողութեան դորին, եւ իթէ զուցէ նւս օրինակն գրքոյս առ ձեզ՝ ի գրատան ձերում գտանիցի, սակայն եւ

յաւելմամբ իսկ սորին եւս զի՞նչ վնաս լիցի՝ բայց եթէ օգուտ բազում: Արդ ընկալարուք զընդհանրեայ ընծայդ ի ձեռաց փանաք ծառայի ձերոյ յուրջ երեսօք եւ հաճեալիք ընդ դոյն սիրով, եւ ողջ լերուք յամայր ամս ամենայն բարեաց արդասեօք՝ ի շինութիւն եւ ի պարծանս ազգին մերոյ եւ մանաւանդ իմ, որ եմ

նուաստ ծառայ Տեառն

Գեորգ Կոստանդնուպօլսեցի Տէր Յոհաննիսեան

Ի Կոստանդնուպօլիս Յամի Տեառն 1777, Փետրվարի 2

(Յ. Գ.)

Ձտրակն ձեր առ մեզ առաքեալ առի ի ձեռաց պատուական առն Պօղոս Աղայի հօր ձերոյ, եւ նովին ի նաւապետէն տրիրքն առաք. բայց զՅառաջարանութիւն նորին՝ թէպէտ եւ կիսկատար, աղաչեմ մանր գրով գրել եւ ի տրակի անդ որ լինելոց է ամին պատասխանող՝ զետեղել եւ յղել, զի յուսամ ես յԱստուած, որ զայս գրքոյս զմի լաւ եւ անթերի օրինակն զտանելոց եմ:

Գերյարդելի Աբբայ Հօրն եւ այլոց սրբասէր կրօնաւոր քահանայից համբուրեմք զՍուրբ Աջան յորդ սիրով:

4.

Յայտ լիցի ձեզ զի այս պատանի որ բերելոց է առ ձեզ զծրար գրքոյս Մեծիմ հոսրովու, է կոստանդնուպօլսեցի եւ անուն իւր Պետրոս, որդի Տանիէլի ուրումն ի հայհոռոմ զարմէ: Եւ քանզի հայր սորին՝ զսա ի Հոռոմ յղելոց էր վասն ուսման, եւ լուայ զի առ ձեօք անցանելոց է յերթալն իւրում զէպի Հոռոմ կոյս, վասն որոյ ետու սմա զայս աւանդ հասուցանել առ ձեզ: Ուրեմն ընկալարուք սիրով եւ զմեզ յիջեցէք յաստուածահաճոյ աղօթս ձեր. եւ տղջ լերուք ի պարծանս հայասեռից:

Յարութիւն Եպիսկոպոսն Բասենցի կոչեցեալ՝, եթէ հաւաստեալ ի Հոռոմ ժամանեալ իցէ, ընդ տղայիս այսմիկ կամ ընդ այլ ումեք՝ հասուցանելիք առ՝ նա զթուղթս, աղաչեմ:

(1777) Փետրվարի 22 (ամստորագիր)<sup>2</sup>

1. Յարութիւն Աբբայ. Բասենցի 1777ին Եւրոպա ըլլալով հանդերձ՝ զիչ ետք կը դառնայ Պոլիս, ուսկից վերջնական կերպով կը մեկնի 1781ին. յաջորդ տարին կը հաստատուի Թրփեստ, ուր կը մնայ մինչեւ կեանքին վերջը:  
2. Յանձնարարական գիր մըն է, զոր Գեորգ Պալատեցի չէ ստորագրած, զուցէ չարժած՝ խոհեմութենէ: Թուականն ալ (1777), որ չէ նշանակուած, ստուգեցինք յաջորդ նամակէն:

5.

Յարդելի Երկուց Հարադատ եղբարց Աղէքսանդր եւ Ղուկաս Կրօնաւորաց ի Տէր խնդալ

Յայտ լիցի պատուելութեան ձերում, զի ահա զմեր խոստացեալն ձեզ, Գիրք Մեծիմ հոսրովու, առաքեցաք նաւու Գափուտան Գուվարային, ընդ մանկան միոյ Պետրոս անուն, որ ի հայհոռոմ զարմէ, զոր առաքեաց հայր նորին, Տանիէլ կոչեցեալ, ի Հոռոմ՝ ի վարժա ուսման. եւ ծրարեալ եմք զգիրքն ի թուղթ թանձրագոյն, եւ ի մէջն իսկ եղեալ զերկուս թուղթս, մի՛ վասն ձեր եւ միւս եւս որ յղելի է ի մեծն՝ Հոռոմ (կամ թէ ուր տրեք եւ իցէ, զոր դուք լաւ դիտէք) առ Բասենեան Յարութիւն Եպիսկոպոսն: Եւ արտաքոյ ծրարոյ գրքոյն այլ միւս տրակ ինչ, զոր ոչ ժամանեցի ի ծրար անդր ամբափակել, որ է Պատմութիւն առասպելեաց Բիւրասայի Ածդաեակայ, զոր յիշէ Սորենացին ի գիրս իւր, զոր գտեալ մեր ի պարսիկ մատենի եւ ի հայ լեզու դարձուցեալ՝ առաքեցաք առ ձեզ, եւ զսոսա առջիք ի յաղնուղարմ Յովհաննէս Չէլչպոյն Սեղրոտեան, քանզի աստի առ նա դիմելոց է այս տղայս անմիջապէս՝ յանձնարարական թղթով, եւ նաւն ի տեղուցէ աստի ելեալ ի ճանապարհ՝ հանդիպելոց է ի Չմիւռին, եւ անդ զաւուրս ինչ կալոց եւ գրեռն առնելոց եւ յետ այնր Աստուծով ի Վենէտիկ գիմելոց է, որ ել ի ճանապարհ ի Մարտի 20: Եւ որպէս մեք գրան առասպելեացն Բիւրասայեայ ի տրակի գրեալ առ ձեզ յղեցաք, նոյն եւ գուր զկիսկատար Յառաջարանութիւն Յովհաննու այնպէս ի տրակի գրեալ եւ իբրեւ ողջունագիր առ մեզ յուղարկեալիք, որոյ փոխարէն եւ ի մէջ, ըստ մերոմ կարի, այլ իրս ձեզ արիտանիս, աստէն գտանել եւ առ ձեզ յուղարկել՝ կամօքն Աստուծոյ լինելոց է. ողջ լերուք:

Ծառայ Տեառն

Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեան

Ի Կոստանդնուպօլիս Յամի Տեառն 1777, ի Մարտի 27

6.

Երկուցուց եղբարց Հարազատաց Աղէքսանդր եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց, ի նուաստ ծառայէս ընծայեցի տղոյն յարգանաց

Ընկալալ գերկուս տրակա ի ձէնջ առ մեզ առաքեալ, որոց մին գրեալ էր ի Մայիսի 13 եւ միան ի Յունիսի 2. եւ որ կանուխ գրեալ էր՝ անաբան եհաս, եւ անաբան գրեալն՝ կանուխ ժամանեաց, զի ի Յունիսի 2 գրեալն՝ եհաս առ մեզ ի յառաջին աւուրս Յունիսի, իսկ ի Մայիսի 13 գրեցեալն՝ ի վերջին աւուրս Օգոստոսի, ընդ որում եւ Առաջարանութիւնն, զոր խնդրեալ էր մեր:

Բայց եւ այլ իմն թուղթ ել ի ծրարոյ անտի, որ էր հասուած ինչ բանից Թովմայի ուրումն Պատմագրի, զոր ընթերցեալ հասու եղէ ըստ կարի՝ գրեցոցն ի նմա, աակայն չէր իմ լուեալ երբեք մինչեւ ցայժմ զայդպիսի Պատմութիւնն ինչ Թովմայի Հայոց Վարդապետի. եւ թէպէտ տեսեալ է ծառայ ձեր զայլ Պատմագիրք՝ Թովմայի անուամբ, բայց նա ոչ պատմէ զայդպիսի նիւթոց, այլ առնէ զպատմութիւնն յետին ժամանակի աւերանացն դիպելոց Հայաստան աշխարհի եւ այլ մասնաւոր իրաց. եւ է ոճ բանից նորա անհեթեթ եւ արտաքոյ կարգի հայկական գրուցարանութեանց, եւ թուի թէ կայ նոյն Պատմագիրքն առ ձեզ, որպէս իսկ ծանեայ ի յօրինակաց ոմանց եղելոց ի նորատիպ եւ պայծառափայլ մատենի Ճարտասանութեանն՝: Բայց կարեմ փոյթ առնել զնմանէ վասն գիւտի նորին, քուցէ անկեալ իցէ ի խորչա ուրեք փոշոտեալ կամ ցեցակեր եղեալ:

Եւ արդ, եթէ կամիք, թղթով վարդապետի ծանուցիք ինձ՝ զի յղեցից առ ձեզ զայլ իմն գիրք պատմութեան Արիստագեսի (sic) ուրմն Հայոց Վարդապետի Լաստիվերտցի կոչեցելոյ, որ պատմէ զաղետալի անցս աշխարհին Հայոց, եթէ՛ արտաքուստ ի մարտից Իսմայէլացոց, եւ եթէ ի ներքուստ ի մէնջ բուսեալ հերձուածողաց Թոնդրակացի յորջորջելոց:

Գրեալ էիք՝ եթէ տակաւին չէ հասեալ առ մեզ Գիրքն Մեկնութեան Մեծիմն Խոսրովու, զոր եղեալ ի նաւն Գափուտան Գուվարային, ընդ մանկան միոյ Պետրոս կոչեցելոյ, յղեցի առ ձեզ, որ ուղեւորեալ երթայր զէպի Հոռոմ կոյս: Եթէ մինչեւ ցայժմ նկեալ իցէ, նշանակեցէք եւ զայն ի թղթի անդ: Մանաւանդ եւ զմանկանէն գրեցէք, զի ի տառապանաց հոգածութեան ծնողք մանկանն գերծցին, եւ չընորհ առնէք՝ եթէ ընդ փոստային յղէք զտրակս զայս եւ ոչ ընդ նաւու, զի մի՛ յամեացի լուրն որ վասն այնր մանկան:

Գրեալ էիք վասն Խորենացոյն սակաւիկ բանիցն, զոր գրեցի եւ յղեցի յառաջագոյն. զփոստից զի այն էր իբր ճաշակ ինչ գրչագիր օրինակին, որ կայ արտ առ մեզ, եւ զայն եւս՝ թէ կամիք՝ կարեմ յղել. քանզի դուք միայն էք յիրաւի արժանի վարչելման այնպիսի ստուգազիծ մատենագրութեանցն գերամեծար նախնեացն մերոց, եւ ձեր օրհնեալ Միսաքանութիւնն է՝ որ զնոցս վաստակն յարգէ եւ ի լոյս ածէ, վասն որոյ՝ եւ զձէնջ մեծապէս շնորհակալ են նոքա ի փառս իւրեանց անդ ի յերկինս, ուստի եւ մաղթանք նոցին՝ որ վասն ձեր

առ Աստուած՝ նպաստաւոր է զարգացման ձերում Միսաքանութեան, որ ի շինութիւն Հայկազեան տունի կայ հաստատեալ, զոր հաստատուն պահեսցէ Տէր ի խնամս իւր. ամէն:

Ձսուրբ եւ զմաքրափայլ Այն գերապատիւ Ստեփաննոս Վարժապետ Վարդապետին համբուրեմ, եւ այլոց դասակից ընկերաց ձերոց՝ ողջոյն յարգանաց մատուցանեմ:

Նուստ ծառայ Տեառն

Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեան

Ի Կոստանդնուպօլիս

Յամի Տեառն 1777, Հոկտեմբերի դ.

1. Յիշած գիրքը, Ճարտասանութիւն, հեղինակութիւնն է Հ. Ստեփանոս Ազոնցի, սպուած վեներիկ, 1775ին:

7.

Երկրցունց հարազատաց Աղէքսանդր եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց յարգումն եւ պատիւ ընծայի ի մէնջ

Գիտութիւն յիցի յարգոյ եւ պատուական տեարց իմոց, զի ըղձական գիր բաղձալեացը իմոց եկեալ ժամանեաց առ մեզ ի 15երորդ աւուրն Դեկտեմբերի, որ էր գրեալ ի Նոյեմբերի 22, զոր ընթերցաք սիրով, եւ ընդ լուր ողջունի ձերոյն եւ խաղաղաւէտ կացութեան սուրբ մենաստանիդ եւ ընդ ողջութիւն գերյարգոյ Աբրահօրն, եւ Վ. Հ. Վարժապետին՝ եւ այլ միեղէն Հարց եւ Եղբարց, առաւել քան զառաւել զուարճացաք, եւ մանաւանդ մինչ լուսք զհասանելին այդր ողջամբ Պետրոս պատանուոյն, եւ խնամակալութեամբ Յոհաննէս Աղային Աեղբորեան յուղարկելն ի Հոռոմ, մեծապէս ուրախ եղաք. քանզի այսպիսի իմն թղթոյ սպասեալ մնայր ծնօղն նորին, եւ բազում անգամ հարցանէր յաղաքս լրոյ՝ յոյժ պաղատելով, զի թուղթ մի գայցէ այտի եւ այնու ստուգիլ գիտացցէ զորպիսութենէ մանկանն իւրոյ. եւ իբրեւ եհաս առ մեզ ստոյգ լուր թղթովն ձերով, շատ ուրախացաւ եւ զձէնջ մեծապէս շնորհակալ եղեւ:

Գարձեալ ի նմին թղթի եւ այլ խնդիրս գրեալ էիք՝ յաղաքս Պատմական գրոյն Լաստիվերտցոյն եւ ուղղադրեալ օրինակի Բերքադափօրն Մովսէսի՝ յղել առ ձեզ, առ ի մնալ յապահովի՝ ի հոյակապ գրաստան ձերում, ի վայելս յարգելի քերթողահարցդ: Վասն որոյ եւ մեք իակոյն ձեռն արկեալ ի գրիչ, ուղղադրել սկսաք զմի ի տպերոց անտի, եւ ուղղեալ զբաղմապատիկ եւ զազգի ազգի սխալանս տպելոյն, յար եւ նման արարաք ձեռագրին, որ իբրեւ եկեսցէ

առ ձեռք, յայնժամ ապա կարէք կենդանի տեսանել զայն պատուական մատենան, եւ յայնժամ լինի ձեզ բարեպէս ճանաչել զբարոյն թերութիւնս եւ թիւրութիւնս տպելոցն, եւ մանաւանդ Անկրիականին, որ իբր ուղղեալ եւ ապա թարգմանեալ ի թագմաց համարեալ լինի. զոր յօժարութեամբ սրտի, յետ ի յաւարտ ամեյոյ զուղղադրութիւն նորին, ընդ Պատմութեան Արխատակեայ՝ ծրարեալ եւ կընքեալ, հանդերձ նաևու, առ ձեզ հասուցանել պատրաստեցաք. եւ ոչ միայն զայստիկ յղեալ՝ յետ այնր դադարելոց եմք, ոչ, այլ հանապազ հետզհետէ, որչափ ինչ ի պիտանեաց եւ յանդիւտ եղելոց քի ձեռս բերցի, զայնս ձեզ հաղորդել՝ եւ ուրախակից կորուսելոցն պիտի առնել, մեծապէս փոյթ յանձին կալաք:

Եւ դիտարացէ յարգութիւն ձեր, զի վասն այսպիսի կորուսեալ մատենից նախնեաց, բազում հարցափորձ ի Հայաստանէ եկելոց արարեալ է մեր, եւ սիրելի քարեկամ ի նոցանէ զոմանս արարեալ, ուր եթէ դէպ լիցի մեզ պնայ, յայնժամ ապա յայտնի լինի, թէ որչափ լաւ լաւ գրեանք մերոցն նախնեաց հաւաքեացի, ի պիտոյ դիւղս առ երիցունս, ի հարց եւ ի հաւուց մնացեալ, եւ ի վանօրեայս Հայոց, մանաւանդ ի զերծ տեղիս՝ ուր հազիւ հասանէ ոտք մարդոյ՝ թուի թէ կարէ ոք գտանել զպիտանիս: Սակայն առ այսպիսի գործս զոմար դարմոց պիտի, որպէսզի զարքատ երիցունս եւ զչքաւոր արեղայս այնու յազեցուցեալ, այնպիսի գծուարագիւտ դանձն յերեւան ելցէ:

Տեսեալ էք զԱստուածաշունչ մատենին մերոյ զթերութիւնսն, համեմատեալ զբարեպէս օրինակաց, որ ի թագում տեղիս շատ հեռացեալ է ի նախնական ստոյգ զբարեպէսն տպեալն Ոսկանայ, որ թող զայն, զի ունէր զմի օրինակ, որ էր արքային Հեթմոյ. ի միում օրինակի անդ եւ ինքն որքան քանս ի յատինականէն ամոթ, կամ թէ փոխեալ գէին ոճն նորով վարեցաւ. ուստի մինչ առընթեր դնի համեմատելով, բազում թերութիւնք յայտ յանդիւման ցուցանի, յորում թողեալ զայսն՝ տեսչիք մանաւանդ թէ Առակէն Սողոմոնի՝ եւ Իմաստութիւնն եւ պրեանքն Մակարայեցոց, որքան մուսլ մթութեան ունին, զոր դուք միայն բարեպէս ճանաչէք, եւ այլք թերեւս հազիւ, զի զձեզ ընտրեաց Աստուած ի մերում ժամանակի՝ այսպիսի իրաց փոյթ առնել եւ զնախնական երկանց վատակս ի լոյս ընծայել: Եւ զայս վասն այնր յիշեցի՝ քի թէ գոնէ զմի օրինակ թագմամեայ եւ վաղնջական դոցէ՛ տք, շատ օգնութիւն լինի ուղղութեան աստուածային մատենին, յորժամ միւսանգամ տպեացի:

Այլ յարագս այնր զի գրեալ էիք մեզ՝ ծանուցանել զգին Երկոցունց գրեանցն, զին նոցին ոչ այլ ինչ է՝ բայց եթէ վայելումն ձեր. սակայն եթէ կամիցիք եւ դուք մեզ զփոխարդարձն սիրոյ տալ տրիտուր, մի Հասարակ Բաղդիբ եւ մի Յատուկ<sup>2</sup>, եւ մի Հարտասանու-

թիւն տպեալ, եւ ջոպատակ մի նորատիպ Առաքինութեանց՝ եւ Մուրաբեանց<sup>4</sup>, եւ քանի մի հատ մանր եւ խոշոր Սաղմոսք, զի որպէս մերն առ ձեզ յիշելիք լինելոց է, նոյնպէս եւ ձերն առ մեզ լինիցի:

Իսկ Վլաստիվերոցին գրեալիք եւ առ մեզ, կամ զօրինակն եւ կամ զօրինակեալն յղեալիք, ո՛չ փութանակի, այլ յորժամ եւ կամիցիք, զի եթէ Տեառն կամք իցեն, եւ եթէ սակաւ ինչ՝ որչափ բաւական իցէ գումար դրամոյ հայթաջիցի, կամիմ պնայ ի ուխտ մինչեւ ի Սուրբ Կարապետ եւ շրջիլ ի շրջակայս նորին. եւ ի դիմել իմում անդր՝ կամիմ հանդիպել ի Սեբաստիա, ի յԱկն, ի Կամախ, յԵրզնակայ, ի Դերջան եւ անտի ի Տարօն, ուր է վանքն Սրբոյ Մկրտչին եւն., եւ յուսամ գտանել զպիտանիս, իբր միտլ քարիւ գերկուս թըռչունս հարեալ. եւ հազիւ բաւէ հինգ հարիւր մարչիլն ուղեգնացութեանս այսմիկ. եւ թէ որքան լինի շահն՝ այն տակաւին անյայտ է, որպէս ուղևանի արկելոյ ի ծով. եւ թէպէտ աւելորդ էր մեզ Երկայնել զբանս ցայս վայր, սակայն դիտելով թէ չէ գիտն, այլ օգտակար եւ շահաւոր, մուրն եւ փետուրն օգնեցին մեզ՝ առ ի տեւել զբարտս. ողջ լերուք:

Վ. Հ. Վարժապետին զՍուրբ Աջն համբուրեմ, եւ այլ դասակից Եղբարց ընդ նմին յարգումն եւ պատիւ յողջոյն սիրոյ ընծայեմ:

Գեորգ չնչին ծառայ Տեառն  
Տէր Յոհաննիսեան

Ի Կոստանդնուպօլիս  
Յամի Տեառն 1777, Դեկտ. 20

1. Զոյգ Ինճիճեաններու դատարակն ու վարժապետը (Վերակացուն) Հ. Ստեփանոս Ազնցն է, որու հետ յաջորդաբար նամակագրութեան մէջ կը մտնէ Գեորգ Պալատեցի:
2. Յիշատակուած Բաղդիբներէն առաջինը Մխիթար Աբբասօր հրատարակած Բաղդիբ Խայկազեան լեզուին է, տպուած Վենետիկ, 1749ին. իսկ երկրորդը հրատարակուած Մխիթար Աբբասի աշակերտներէն՝ հրատարակ կ'ելլէ 1769ին:
3. ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ, Գիրք Առաքինութեանց, տպ. Վենետիկ, 1772:
4. ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑԻ, Գիրք Մոլութեանց, տպ. Վենետիկ, 1773:

8.

Գերապատիւ Հարազատաց երկոցունց Արէքսանդր եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց, յարգութիւն ընծայի ի մէնջ մեծաւ խոնարհութեամբ

Ընկալայ զգիր օրհնեալ մատանց ձերոց ի յառաջին աւուրն Մայիսի, որ էր գրեալ ի յօթներորդումն Ապրիլի, եւ ուրախ եղէ մեծապէս եւ զուարճացեալ քերկրեցայ՝ իբրեւ զէմ յանդիւման տեսու-

Թեամբ ձերբով: Յորում գրեալ ծանուցեալ էիք ծառայի ձերում՝ դժամանումն տրակին մերոյ տր յաղազս առաքման պատմական գրեանցն, զոր պատրաստեալ եմ այժմ եւ յղեցոց եմ ի դէպ ժամանակի մերձ ընդ մերձ աներկբայաբար, որք կամօքն Աստուծոյ առ ձեզ ժամանեցեն եւ բերկրեցիք ի քնթեռնուն ձեր դնոսա, եւ որպէս ի հոսարովն տեսիք եւ դտիրք, նոյնպէս եւ ի հոգեմնացւոյ մատենին դոսանելոց էք զբաղում կորուսեալ միտս քանի, եւ բազում ցնծութիւն առնելոց էք ի վերայ այսպիսի գիւտի:

Եւ ոչ միայն զայսոսիկ, այլ նաեւ հետեւաբար որչափ այսանակ պիտանի բանք ի ձեռս մեր բերցին ի տեղեաց տեղեաց, որոց մեծապէս հետաքրքիր եմք, ամենեցուն զձեզ հաղորդ կացուցանել իրաւունս համարեցայ, զի դուք էք միայն արժանի ծանօթութեան այսպիսի իրաց, որ գիտէք զյարգ վաղնջական մատենից:

Ի վաճառ ինչ Հայաստանեայց գրչագիր Ագաթանգեղոս իմն գոլ լուայ, ի նորին վանապետ երիցուէն, որ ինձ ծանօթ էր աստ ի քաղաքիս. եթէ դէպ լիցի ինձ երթալ անդր, զոր ի մտի եղեալ եմ, եւ զայն եւս եթէ ստացայց՝ առ ձեզ յղել, յօրէ անտի յորում լուր զմատենէն առի՝ խորհեալ եմ. այսպէս գիտաւջիք:

Գունակ սոցին եւ այլ շատ իրք ի ձեռս բերիլ վարեն, մանաւանդ եթէ քանի մի Սաղմոսս մանր եւ խոշոր, եւ քանի մի Աւետարանս եւ Կտակարանս, եթէ զատ զատ եւ եթէ ի միասին միակողք կազմեալ՝ ընդ իւր ոք ունիցի. զորս վասն այնորիկ ի ձէնջ խնդրեալ եմ յղել, զի թէ դէպ լիցի գնալ, յետ քանի մի ամսոց, ընդ իս նորայց, որոց փոխան հատուցի ձեզ՝ առաքմամբ գրչագիր օրինակաց:

Ի յղելն ձերում զտպեալ գրեանսն նաւու, վանիսեցէք յղեցէք ընդ փոստային զայլ թուղթ իմն առ մեզ, հանդերձ նշանաւ իւրիք, եւ զըրեսջիք զանուն նաւապետին եւ զթիւ համարոյ գրեանցն, զի ծառայ ձեր անձամբ անձին գնացեալ անմիջապէս լոսելեայն առից քի նմանէ՝ զգրեանսն այնուիկ նշանաւ:

Իսկ զԱստուածաշունչ տառին գհամաձայն եւ զտարաձայն բանսն եւս՝ ոչ դանդաղեցայց յղել, բայց ժամանակի պէտս ունի, զի ծանր դործ է, որպէս եւ դուք քաջ գիտէք:

Ողջ լերուք յամայր ամս ի ցնծութիւն ծառայի ձերոյ նուաստի

Գեորգայ տրպի  
Տէր Յովհաննիսեան

Ի Կոստանդնուպոլիս  
Յամի Տեառն 1778, ի Մայիսի 3

(Թ. Գ.)  
Գերապատիւ Հ. Ստեփաննոս Վարժապետ Վարդապետին գլուորք

Աջն համբուրեմ, եւ ալլոց դասակից Եղբարց ձերոց՝ նոյնգունակ յարգումն նուիրեմ ի Տէր:

Գերբարգելի Ագրայ Հօր մերոյ գլուորք Աջն համբուրեալ զօրհնութիւնն հայցեմ փափագմամբ:

9.

Երկոցունց եղբարց հարազատաց Աղեքսանդր եւ Ղուկաս գերապատիւ կրօնաւորաց, յոգն սիրով յարգումն ընծայեցի

Եկեալ ժամանեաց առ մեզ տրակ սիրալիլ որջունի ձերոյ՝ ի վերջին աւուրս ամսեանն Հովտեմբերի, եւ յետ այնր ընկալաք նաեւ ի ձեռաց Գ. Հ. Սուքիասին գձեր առ մեզ առաքեալ մատեանսն. ա. Յատուկ Բառգիրք, չուխտ մի Առաքիմութեանց եւ Մովութեանց, եւ դ. հատ Սաղմոսք, բ. խոշոր եւ բ. մանր:

Եւ մեք թէպէտ վաղ ուրեմն արդեօք յղեալ էաք զԲերթոպոսի Մատեան Պատմական առ ձեզ, սակայն այլ եւ այլ որպիսութիւն քաղաքիս, թէ՛ մահական եւ թէ՛ ահական, յապաղեաց զմեզ մինչեւ ցարդ: Բայց այժմ ժամ պարապ գտեալ կամօքն Աստուծոյ յղեցաք առ ձեզ, ի ձեռն նոյն վերագրեալ պատուականին՝ զմերն քնծայ առ ձերդ յարգութիւն, զոր առեալ ընկալարուք իբրեւ գիտեւէչս այլուոյն, եւ յիշեսջիք զմեզ ի միտս բարիս:

Եւ քանզի ի թղթի ձերում գրեալ ծանուցեալ էիք վասն Մեկնագրութեան հոսարովու՝ զորով ծանուցումն փնջ առնել, նորին աղադաւ ընդ Պատմագրութեանս եղան գետեղեցան ի պահարանի քանի մի թերթիք թղթոց ցան եւ ցիր՝ գրեալք ի Պատմութեանս, առ ի բացայայտ ճանաչումն ոճոյ ուղղադրութեանս մերոյ. որովք եւ ի հոսարովն եղեալ դժուարութիւնք փառնութեան եւ անյայտութեան չակերտիցն՝ յայտ եկեալ լուսաւորին, եւ իւրաքանչիւր բառ կամ բան ի լուսանցս չակերտիւք եղեալ, ի յանձնիւր տեղիս ի կարգս տողից զնին զետեղին:

Ձի ի յուղղադրութեան ձերում ոչ գոլով մի միայն չակերտն բաւական առ ի լինել ցուցակ մտից՝ եղելոցն ի լուսանցս մատենին, յարազս բարձր լինելոյ սխալմանցն եւ պակասորդացն, հնարեցաք յայն սակս եւ զայլ ձեւս ինչ՝ ըստ հանդիպման, որպէս (I A O Δ) ձ Գ եւ այլս թերեւս, եւ ուրեք ուրեք ի վերայ ուղղելի բառին գգիծս զայս քարչեցաք, որպէս ի Գիրքն Բ. գլուխ խն. Օլիպ Բուրմ գրեալ, դնի ի լուսանցսն Ողիւմպ Բուրմ, որով ցուցանել կամեցաք թէ՛ դրչագիրն Ողիւմպ է:

Եւ ուրեք տւրեք, ուր ոչ գոյր ի ձեռագիրն բառ ինչ կամ բան, գիծ ի վերայ քարչեցաք, եւ ուրեք ուրեք բոլորովին եղծեալ ջնջե-

ցաք: Իսկ ուրեք ուրեք թէպէտ գտանիւր, բայց սխալ կամ յետ եւ յառաջ եղեալ, գիծ քարչեալ եղծաք, եւ ի լուսանցան զգրչագրին զուղիղն գրեցաք եւ չակերտ նշանադժիւ ցուցաք գտեղն՝ յոր մտանելոց էր ի տողին:

Բայց ուր պիտոյ լինէր զ գնել կամ և, կամ այլ տառս ինչ, որք պակասէին ի տպեալն եւ կային ի գրչագրին, եւ հարկ էր գտպեալն նոյնացուցանել ընդ գրչագրին՝ եղաք, որպէս տեսանի: Եւ ուր ոչ գոյր ի գրչագրին, եղծաք ի տպելոյ աստի:

Դարձեալ ծանիցէ յարգութիւն ձեր, զի ի գրչագրին գրի Գիրք ա. ք. գ. եւ Գլուխ ա. ք. գ. դ. ե. եւն. եւ ոչ գրի հատոր եւ պրակ, որպէս ի տպեալն:

Գրի միշտ ի գրչագրին Մակեդոնացի, Հռոմ, Յոսիանոս, Լիլիանոս, Կիրիլիա, Դիակոնտիանոս, Կիւնտոս, Տակիտոս, Փլոնիանոս, Կելեստինոս, Սահակ, Մեսրոպ, Պահլա, Պաղեփատոս, Պորփիր, Տիգրան, Կղոզիոս, Օրեղիանոս, Վաղերիանոս, Դեկիոս, Եղեւիս, Կեսարիա, Սոփի եւ Յեզկրտի եւ ուրեք Յագկերտի, եւ այլք նմանիք սոցին, որպէս իսկ ուղղագրեալ է, եղծամաք կամ գրամաք, զի ի տըպեալն այլպէս եղեալ են՝ եւ ոչ ըստ հայոց:

Այլ եւ բաղմաթիւ յաճախութիւն գլխագրաց եւ բթանչանից, որք ոչ գոյին ի գրչագրին, եթէ ոչ ի սկզբունս գլխոց եւ տանց, զի արտաքոյ է այն խառն ի խոռոն յաճախութիւն գլխագրացն ի սովորութենէ գրչութեան գրծու (sic) մատենիս:

Եւ յետ դուզնաքեայ բանիս՝ կնքեալ եւ եզերեալ գտրակս, մնամ պատրաստական ծառայ յարգութեան ձերում

Գեորգ չնչիմ  
Տ(էր) Յ(ովհաննիսեան)

1778, Դեկտ. ա.

10.

Յարգոյ Հօր իմոյ Տեառն Միքայէլի Վարդապետի Չամչեանց  
գՍուրբ Աջն համբուրեալ, զօրհնութիւնդ հայցեմ փափագմամբ՝

Յայտ լիցի քեզ, ո՛ր Հայր պատուական, զի գիրն քո եկեալ ժամանեաց ի ձեռս իմ՝ ի Դեկտեմբերի թ. եւ նս ընթերցեալ զնոյն իմացայ, յորում գրեալ էիր՝ թէ քահանայ ոք Տ. Վրթ(անէս) անուն, որդի Հ. Ք., հուշակեալ է վասն ազատութեան մատենին այնորիկ, թէ այն եղեւ ձեռամբ իմով, եւ թէ գիտակ է, ասէ, այսմ Տիրացու Գէորգն: Յոյր սակս եւ Պատուականդ հարցանես գիս՝ տեղեկանալ իրին որպիսութեան:

Վասն որոյ ծանիր, զի նա բազում անգամ եւ բազում ուրեք յաղագս այնր մատենի՝ ցաւակից գոլով, ջատագովութիւն արար ի տեսաւորիլն իւրում ընդ հովուականաց եւ ընդ շնորհականաց, ասելով թէ իրաւունքն պահանջէ դարձուցանել զայն մատեան առ տէրն իւր, որպէս եւ այլք ոմանք ի մտերիմ արանց զնոյն ասացին նոցա. եւ այս այսպէս եղեւ: Բայց թէ ո՛ր բան աղղեաց եւ յետս դարձաւ մատեանն ի տեղի իւր, ոչ գիտեմ:

Արդ՝ եթէ դուք պատկերս ունիցիք կամ գիտիցէք նկարել պատկերս, ոչ միայն նմա՝ այլ եւ ինձ պարտական էք տալ զպատկեր մի. ասպ թէ չունիք պատկերս եւ ոչ էք պատկերահանք, չէք պարտական, բայց եթէ առնել միայն բարեմաղթութիւնս ինչ վասն բարեբարացն. ողջ լերուք:

Տեառն Աստուծոյ նուաստ ծառայ  
Գեորգ Պալատական

Յամի Տեառն 1778, Դեկտ. ժ.

1. Այս նամակին պարունակութեան մասին կարելի չեղաւ լուսարանութիւն մը գրանել. շատ հաւանաբար Չամչեան գիծած է Պալատեցիին, Պատմութիւն Հայոցի համար աղբիւր մը ինդրելով, ինչ որ կարելի չէ եղած, սակայն, ստանալ:

11.

Գերապատիւ երկոցունց եղբարց հարազատաց Աղէքսանդր  
եւ Ղուկաս աստուածասէր կրօնաւորաց ի Տէր խնդալ

Ընկալայ զթուղթն ձեր, գգրեայն ի Մայիսի 2, ի ձեռաց պատուական Հօրն ձերոյ Պօղոս Աղային՝ ի Սեպտեմբերի 11, եւ ընթերցեալ վերահասու եղէ գրեցեալ գիտաւորութեանցն. ուստի զայս ինչ գիտաւորք, զի չեմ դձեզ մոռացեալ եւ չեմ իսկ մոռանալոց, եւ խոստացեալն իմ ձերում պատուականութեան՝ ահաւասիկ ի բազում ժամանակաց հետէ այնպէս ծրարեալ եւ կնքեալ սրբասէ յարմար միջոցի, որպէս ի թղթոյ անտի որ ի մէջ նորին, յորժամ Աստուծով եկեալ հասանիցի առ ձեզ՝ ասուղիւ ճանաչելոց էք:

Քանզի իբրեւ ի Վ. Հ. Սուքիասէն զձեր առ իս առաքեալ պարզեական գրեանսն սուի, ի յաղմկեալ ժամանակին, եւ իսկոյն կամէի զծրարն իմ յանձնել նմա՝ առաքել առ ձեզ, եւ զի ժամանակն լի էր փնդորութեամբ վատախորհուրդ արանց, տեղի տուեալ սակաւ ինչ յապաղեցի, եւ յետ այնր, մինչ պարապորդ գտեալ՝ տարայ զծրարն յանձն առնել նմա, լուսայ յայնժամ յանդէն եղելոց՝ դճուելն նորին առ ի ձերդ կոյս՝, եւ շատ տարակուսեցայ, եւ թախիծ տխրութեամբ յետս դարձեալ՝ յայնմ օրէ եւ այր այնպէս առ

իս ծրարն ի տարականիս կացեալ մնացեալ է, որ իբրեւ զաղաւնի մնչէ եւ որպէս ծիծառն ճչէ, հեծէ եւ երկնէ, թեւանալ, վերանալ, սլանալ ժամանել առ ձեզ:

Մի՛ գնուաստս համարիցիք զժրող խոստման, որ ի հերուն հետէ պամօթ լինիլն իմ առաջի ձեր՝ ոչ հանեմ ի մտաց իմոց, քանզի կարի վատթար իր է խոստանալ եւ ակնկալու առնել եւ յապաղել եւ նեղութիւն տալ ակնկալողին. սակայն որպէս ի խոհական գործն ձերմէ ծանեայ, որ եւ զուրք բարեօք զխտէք զայս՝ ոչ եղեալ ի կամաց, այլ ակամայ, եւ զի ակամայն ներման արժանի է, անմեղաբիր եւ անբասիր եղէց առ ի ձէնը, որ խոհեմագործն եւ հանճարեղ էք:

ՁԱստուածաշունչն տչ կարացի ստանալ, (թէպէտ շատ մնաց առ իս), զի յղէի առ ձեզ վամ թէ վասն ձեր գնէի, եւ այսմ պատճառ եղեւ անբարձար եւ չփոթական գոյն անցեալ օրերոյն. ուստի տէր նորին, (որ էր Կրէց ոմն) առեալ գնաց ի տեղի իւր. ակն ունէի գնել, վասն որոյ ոչ փոթացայ շատ դրել, այլ աստի եւ անտի ցիր եւ ցան սակաւ ինչ. բայց կարելի գոյ յուսամ, թէ յետ ժամանակի ինչ ի ձեռս բերցի, վասն լինելոյ քահանային մեզ ծանօթագործն:

ՁԱստիվերացւոյն Պատմագիրքն կամէի յղել ընդ ծրարոյս, բայց թողի աստէն, վասն զի կայ ի յինքեան ի քանի մի տեղիս տողք եւ բառք ջնջադիրք. թող հորեմացւոյն ծրարն գայ եւ անվնաս ժամանէ, եւ ես աստ եւ անդ պարագիտեցից, իցէ թէ գտանել կարացից զմի օրինակ եւ գրեցից, եւ այնպէս առաքեցից: Մի՛ լիցի ձեզ վասն այնր ինչ հոգալ. ձեր է այն, ձեր է օրինակն նորին, եւ եկեացէ պտցէ զձեզ. ողջ լերուք ի պարծանս իմ, որ եմ

Յուսաստ ծառայ  
չնչին Գեորգ Տէր Յոնաննիսիսեան

Ի Բիւզանդիոն  
Յամի Տեառն 1779, Մեպտ. 14

(Յ. Գ.)

Գերապատիւ Վարժապետ Վարդապետին, եւ Վ. Հ. Սուքիասին զՍուրբ Աջն համբուրեմ. նոյնպունակ եւ այլոց դասակից եղբարց ձերոց ուտումնակցաց:

Ձխորեմացւոյն ծրարն կնքեալ յանձնեցի Տիմօթէոս Վարդապետին Գաղատացոյ. ի վալ եւ ի ժամանելն առ ձեզ՝ զպատասխանին ժամանման առ Տիմօթէոս Վարդապետն յղեցէք, զի ի ձեռն նորին դիւրաւ առ իս հասցէ. ողջ լերուք:

1. Հ. Սուքիաս Աղամալեան 1779ի գարնան վեներտիկէն կը մեկնի Պոլիս, հոն պաշտօնավարելու համար. սակայն կրօնական հարածանքները այնքան զօրաւոր էին՝ որ հագիւ քանի մը ամիս կը մնայ Պոլիս, ու կը դառնայ վեներտիկ:

12.

Գերապատիւ Հօր իմոյ Տեառն Ստեփաննոսի Վարժապետ  
Վարդապետին զՍուրբ Աջն համբուրեմ  
մեծաւ խոնարհութեամբ

Ընկալայ զթուղթն պատուականութեանդ՝ ի ձեռաց Վ. Տիմօթէոս Վարդապետին՝, յամսեանն Մայիսի, եւ հասու եղէ դիտաւորութեանցն որ ի նմա, եւ առաքեցի գնտուկն փոքրիկ լի ձեռն նորին առ ձեզ՝ նաւու, որ ունէր յինքեան զՔերթողիմ Պատմագրութիւն, եւ դոմանս ցրիւ թուղթս ի գրչագիր Աստուածաշնչէ հանեալ:

Եւ զոր դրեալ էիր վասն այլ եւ այլ նախնական գրեանց, եւ մանաւանդ Աստուածաշնչի, լաւ ի միտ առի, զորոց եւ ես քաղում փոյթ ունիմ, եւ եթէ պէպ լիցի ի ձեռս արկանել, պատրաստ եմ հաւատարմարար առ ձեզ հատուցանել՝ լուռ եւ անշուշտ:

Իսկ զՇնորհաւոյն Մեկնութիւն Մատթէի, զոր վիտակատար մեկնեալ է, եւ ապա լրացուցեալ գնոյն Ծործորեցիմ Յոնաննէս, ոչ յոյժ բաղմաւ յառաջ քան զգեկուցումն ձեր, թոյլորդիր՝ եւ արուեստաւոր եւ հին՝ անկաւ, տրոյ գին վաթսուն մառչիլ. եւ քանզի ոչ ունէի առ ձեռն զմառչիլսն պատրաստ, յետ առեալ անցորդ արեղայն՝ չոգաւ յերկիրն իւր. այսպէս գիտասցես:

Կաթողիկոսն վախճանեալ է ի 26 Յուլիսի, եւ ի տեղի նորին եղեալ Ղուկաս ոմն, որ նախ քան զամս լինչ առաջնորդ էր Իրմիրու, որ կարծեմ լինել ի սահմանացն Կարնոյ, եւ յաշակերտութենէ Բասենականին, զորմէ պատմեն բարեբարոյ ոք լինել:

Վ. Հարց, այսինքն Հ. Սուքիասին եւ երկոցունց հարազատաց եղբարց Հ. Աղէքսանդրոսին եւ Հ. Ղուկասին՝ համբուրեմ զԱջն մաքրական: Ողջ լերուք ի պարծանս մեր

Ծառայ ձեր չնչին  
Գեորգ Տ. Յ.

Յամի Տեառն 1780, Հոկտ. 17

(Յ. Գ.)

Բայց սակայն, ո՛վ Հայր պատուական, եթէ կամիցիք եւ հաւանիցիք, ահա ես ծառայ ձեր գնալոց եմ ի կողմանս Մլշոյ՝ յառաջիկայ զարնանս. աստ քիչ մի դրամ ի ձեռս իմ հասուցէք, զոր ոսկի արարեալ եղեալ ի կամարի ի գնալն իմում, փոյթ արարեալ գնեցից կամ օրինակեցից՝ եւ կամ ուղղադրեցից գոմանս պիտանի գրեանս, եւ ի դարձին առ ձեզ հասուցից. որպէս Նարեկայ Ներքողեմանն, եւ ապականեալ Ագաքանգիդոսն, եւ այլ գրեանք, եթէ՛ պատմականք եւ եթէ՛ ճառականք, զորս ծառայ ձեր ըստ կարի ճանաչեմ:



Եւ զի ունիմ բազում ծանօթս յերկրացանց եւ ի յարեղայից ի կողմանսն յայնոսիկ, ալին ունիմ օգտակար իմն յառաջ բերել: Ունիմ նաեւ ազդական ոմն վարդապետ ի Սուրբ Կարապետն. առ նմա ժամանակ ինչ ի զնալն իմում մնալոց եմ, եւ նորին առաջնորդութեամբն խոհեմաբար ի խորչ եւ ի զերծ տեղիս՝ փոշտեալ գրչապիքս վարեմ Աստուծով գտանել, ի չըջակայ վանորայսն որք անդ:

Տեսէ՛ք, եթէ հաւանիք ասացելոցս, լուռ եւ անչառնչ փութով պատասխանի արարէք, այսու պայմանաւ՝ որ Գերարդոյ Մեծաւորն, զորոյ զՍուրբ Աջն համբուրեմ, եւ զո պատուականութիւնդ եւ ես միայն գիտասցուք, եւ այլ ոք ո՛չ բնաւ, ո՛չ այդր եւ ոչ աստ, վասն բազմազիմի նկատմանց:

Եւ աստ առ իս 300 մառչիլ ընդ ձեռն Տիմօթէոս Վարդապետին հասուցէք՝ մինչ ի Մեծ Պահք, զի առեալ ճանապարհորդ եղէց. եւ Տիմօթէոս Վրդ.ն այսքան միայն գիտասցէ, իբր թէ յղեալ իրի գինն է՝ զոր ինձ տայ, զի մի՛ ոք գիտասցէ երբեք վասն անշահութեան օրերոյս: Եթէ այսպէս առնիցէք՝ հաճոյ է ինձ, եւ եթէ այլապէս՝ ոչ է հաճելի: Քննեցէք եւ տեսէք. եթէ այսպէս ձեզ հաճոյ իցէ՝ արարէք, եւ յուսամ յամենաբարին Աստուած, զի հաւատարիմ երեւեցայց, եւ ի կատարածի ասոք ցորեան հնձեացի եւ անուշահամ պլատուղ քաղեսցի: Մի՛ յամեցուցիք զպատասխանի թղթոյս. եւ դուք եւս զմանս գրեանս, զորս որոնէք, յանուանէ յականէ ծանուցէք ի թղթի անդ եւ նշանակեալիք:

Նաեւ զմասուենս բաղարդութեան ձերոյ անփայլ թանաքին իւրաքանչիւր սխտութեամբն հանդերձ գրեալ յառանձին իմն թղթի՝ յղեսլիք, զի զայնպիսի անփայլ թանաք կազմեցից. ողջ լեբուք:

Նաեւ ընդ այնր անտկի զոր առ ձեզ յղեցի, գոյր նաեւ այլ նոյնպիսի անտուկ ի Հռոմ գնալի. եթէ զձերն ընկալեալ իցէք եւ զնոյն եւս յղեալ ի տեղն իւր, ի թղթին նշանակեալիք, զի անհոգ եղիցի տէրն:

Ծառայ Տեառն  
Գէորգ Բուսատ Եւմ.

Ի Մայրն քաղաքացն Թրակիոյ  
Յամի Տեառն 1780, Հոկտ. 17

(Հասցէ) Ի Ձեռս Ստեփաննոսի Վարժապետ Վարդապետին Ագոնց Վենետիկ

(Յ. Գ.) Վ. Հարց, այսինքն Հ. Սուրբիասին եւ երկոցունց հարազատ եղբարց, Հ. Աղեքսանդրոսին եւ Հ. Ղուկասին համբուրեմ զաջսն մաքրական:

- 1. Տիմօթէոս Վրդ. Սիմոնեան, աշակերտ Քուլէճի, համակիր ըլլալով Միթարեաններուն, մօտէն կը նպաստէր անոնց: Սա է որ միջնորդի գլբ կը կատարէր Գէորգ Պալատեցիի, որու ծանօթ էր անշուշտ, եւ Միթարեաններու միջեւ:

13.

Գերապատիւ Հօր իմոյ Տեառն Ստեփաննոսի Վարժապետ Վարդապետին Ագոնց զՍուրբ Աջն սիրով համբուրեմ

Ընկալայ զգիր պատուական Հօրդ իմոյ 1781 ի Յունվարի 31, որ գրեալ էր ի Դեկտեմբերի 6, եւ իմացայ որ ինչ ներպարունակեալ ի նմա, եւ ուրախ եղէ:

Եւ զոր խնդրեալ էիքն՝ ահա այժմ ծալեալ ծրարեալ յանձնեցի Տիմօթէոս Վարդապետին, զի առ ձեզ ընդ նաւապետի ուրուք յլեսցէ, ծանուցանելով զանունն եւ զնաւն, զի եւ դուք ի նմանէ առնուցուք:

Եւ յղեարն մեր է Արիստազէս Լաստիվերացիին, որ է տասն տետր. բայց եւ զայլ տետրակա ինչ եղեալ ընդ նոսա յղեցի, զորոյ գհեղինակն յերկրորդ գլուխն գրոց իւրոց յիշէ Լաստիվերացին, Ստեփաննոս Տարօնացի՝ Պատմագրօղ անուամբ, զորոյ երբեմն տեսեալ եմ զՊատմագրական մատեանն. եւ քանզի թղթովք ոմամ(ք)ք ի միջոյն պակասէր, ոչ գրեցի զբովանդակն, այլ զայսքանս (զոր արդ յղեցի), սկսեալ յառաջին եւ տչ մինչ ի վերջն, այլ աստի եւ անտի քաղեալ, եւ է այն գիրք իրեք հատոր, եւ ճոխաբար պատմելով հասուցանէ մինչեւ ի ժամանակս Սարգսի Կաթողիկոսի, եւ աւարտէ:

Արդ՝ ընկալարուք գրոսսա եւ յիշեցէք զմեզ արտի մտօք. ողջ լեբուք:

Գերապատիւ Հ. Սուրբիասին, եւ երկուց հարազատաց Աղէքսանդր եւ Ղուկաս կրօնաւորաց համբոյր մատուցանեմ սրբասնեալ ձեռաց:

Յարգութեան ձերում  
ծառայ յետին  
Գէորգ Տ. Յոն.

1781, Փետրվարի 28

14.

(Հատուած մը)

Բայց եւ զայս ծանիցէ յարգութիւն Ձեր, զի զպակասութիւն որք էին ի պատմական գիրսն Լաստիվերացւոյն գլխով եւ համարումն ի տետրի իմիք նշանակեցի, զի եթէ ուրեք գալից գայլ օրինակ ինչ՝ լրացուցից: Եւ թէպէտ այսպէս արարի, սակայն առաւել զայս կամիմ զի զհին օրինակն ի ձեռս քերից, զինչ եւ իցէ մատենից, որ եթէ այսպէս գէշ պ լիցի, յոյժ նուազ են գրամբն որք ընդ իս. սակայն ես

առ այժմ զայս ուղեորութիւն խորհեցայ թե՛թեւակի իմն առնել . տեսից՝ թէ՛ որպիսութիւն իրին յո՛ր կերպ եզերի :

Սակայն յուսամ թէ՛ որքան եւ իցէ՛ դատարկ ոչ ելից : Սակայն դուք այսուհետեւ թուղթ երբեք մի՛ յլիցէք եւ մի՛ յինէն հարցանիցէք . ես Աստուծով ի ժամանակին ձեզ զրոյց յղարկեցից զբով, զի այսպիսի իր պարտ (է) լինել յո՛րն եւ անշտունչ, քանզի քաղում մտանգ առն- թեր կայ ի յայտնիլն՝ յաղաքս ամանակիս ձախողութեան . նորին աղազաւ յայլ թուղթ դժազրեցի զդեկուցմունս զայս, զի մի միայն դու գիտասցես :

Եւ ընդէ՞ր է ինձ այսքան երկարել զքանս իմ իմաստնորդ, որ միով՝ զբազումս իմանաս . ողջ լեր :

Ճառայ չնչին  
Գէորգ

(Յ. Գ.)

Առի ի ձեռաց գերապատիւ Տիմօթէոս Վրդ.ին 300 զռչ. որոյ կէսն կանէ 150 դռչ., եւ առի ի Մարտի ճերորդ աւուրն :

(Մարտ-Ապրիլ, 1781)

(Հասցէ)

Ի ձեռս Ստեփաննոսի Վարժապետ Վարդապետին Աշոնց փ բարին :

15.

Գերապատիւ Հօր իմոյ Ստեփաննոսի Վարժապետ Վարդապետին գՍուրբ Աջն համբուրեալ զօրհնութիւն հայցեմ

Գիտութիւն լիցի պատուականութեանդ, զի մեք չոքաք յարե- լելս կոյս ի Հայաստան աշխարհ, եւ ի տեղիս տմանս չըջադայեալ, ձմերեցաք նաեւ ի նմին աշխարհի, եւ քովանդակ երթեւեկութեան մերոյ միջոցն եղեւ, փ սկզբանէ մինչեւ ի վախճան՝ յամիսս չորեք- տասան, ուր եւ նեղութիւնս ինչ կրեցաք, թէ՛ ի խօթութենէ եւ թէ՛ ի չգոյէ գրամոց, քանզի սպառեցան յայնքան ընդարձակ միջոցին, մինչ զի քանի մի մառչիլ պարտականութեամբ հազիւ կարացաք ան- կանիլ ի Բիւզանդիոն :

Բայց այսու ամենայնիւ քանի մի մատեանք փ ձեռս եկին, եթէ ուղղազրելով, եթէ օրինակելով եւ եթէ պնելով, որ թէ՛ զբրամոյ բա- ւականութիւն լինէր, եւ յայլ խորագոյն տեղիս մուտ առնէսք՝ ա- լելի արդիւնաւոր գործ վճարիւր . սակայն առ այժմ զայսքանս ի հարկէ բաւական համարեալ՝ դարձ արարաք, եւ փոքու գրական ձեզ ծանուցեալ գեկուցաք, որ թէ՛ դէպ լիցի եւ յետոյ զկնի ժամա-

նակաց ինչ կրկին պնալ, կարծեմ լաւ եւս աջորումն լինել յայնժամ, քանզի այս անգամ օտար էի, բայց ծանօթութիւն բազում այսուհե- տեւ ստացեալ ունիմ :

Եւ քանզի յիւրաքանչիւր վանս մնալ հարկ լինէր ինձ զբազում աւուրս, մանաւանդ իրբեւ լսէի զիմն ի խնդրեցացն իմոց անդէն դտանիլ, տուրք վանացն եւ նորին երեւելի պաշտօնէիցն որ յինէն նոցա տուեալ լինէր, փութով սպառեցին զորս փ քսակին :

Եւ ես ուղիղ քծիւ մինչեւ ի ծայր սահմանացն Հայոց գնացեալ, հասի ի Հաղբատ եւ ի Սանահին, եւ վտի ի Հաղբատ զոմանս գիրս, եւ հաճեալ տրօք զմիտս միտն ի պաշտօնէիցն՝ առեալ ուղղազրեցի լուելեայն, գանխուլ ի յայլոց :

Ապա չոքայ յԱրարատեան դաւառ, եւ անտի փ սահմանս Տարօ- նոյ ի վանս ինչ երթեալ՝ գտի անտանօր մի մատեան հին եւ ոչ ու- րեք դտանելի, որ վրեցեալ էր ի կղզին Աղթամար, եւ էր Գիրք Պատ- մութեամ Ղազարու Փարպեցու ճարտասանի, զորոյ թէպէտ զանունն լուեալ էի ի պատմական գիրս, բայց զինքն ոչ երբեք տեսեալ . եւ ոչ ես միայն, այլ նաեւ բազումք . զոր Աստուած յանակնկալ տեղ- ւոջէ ինձ ի յայտ ածեալ, գրել եւ ստանալ ետ, որոյ գիտն թեթե- ւացոյց զբողոք աշխատութիւնն իմ : Որ նպատակ առաջի եղեալ զԱ- զաքանգեղոս եւ գիւղանդ Պատմագիրսն, երրորդ ապա եւ գիւրն յա- րակցելով ի նոսա՝ սկսանի զպատմութիւնն իւր ի բաժանմանէ թա- դաւորութեանն Հայոց, եւ ի թարգմանչացն Սահակայ եւ Մեսրո- պայ . եւ ճառեալ եւս անդէն զանցս նահատակութեան Վարդանանց լի եւ լի՝ եւ հասուցեալ ի մարզպանութիւնն Վահանայ Մամիկոնոյ, եւ ի հայրապետութեան Յոհաննու Մանդակունոյ, եւ գրեալ եւս զմի Ատեմարամութիւն նորին, որ առ ժողովուրդն, ի վերջն գրքոյն, փակէ զգրութիւն մատենին իւրոյ : Եւ որպէս կանխաւ իսկ ասացեալ եմ, մի՛ ոք զայս իր, բաց ի մէնջ յերիցս, գիտասցէ, զի ինձ վնաս է եւ ձեզ ոչ օգուտ :

Գտի եւ յայլ վաւառի գՊատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ, զոր արարեալ է Կարխմի աշակերտին Մեսրոպայ՝ համառօտիւ . եւ զայն եւս գրեցի . եւ թէ՛ որպիսի տաժանմամբ զսոսա փոխարկեալ եմ վասն միայնակ քորոյս, այն Աստուծոյ է գիտելի :

Ֆ տեղի ուրեք վտի եւ զԱրիստակէս Լաստիվերցիմ, եւ քանզի զպակասորդս նորա յիմիք թղթի նշանակեալ էի, զայնս եւս լրացու- ցի . եւ զքան յիշատակարանին՝ որ միին իմն էր՝ քովանդակ գրեցի, զոր եւ յղեցից առ ձեզ :

Գտի եւ մի գիրք Մեկնութեամ Կաթուղիկեայ գրոցն Յակոբայ, Պետրոսի, Յոհաննու եւ Յուդայի, զորմէ գրեալ էր ի վերջն՝ թէ է արարեալ ներստի Ալայեցույն, որ յիւրաքանչիւր քնարանի հաւաք- ուածս ի քանից զանազան վարդապետաց եղեալ, եւ գիւրն եւս ի նո-

սին յաւելեալ: Ուր ի նմին գրքի նաեւ գոյ բան ինչ խօսեցեալ Վասն երկնից՝ Յոհաննու Երզնկացւոյն, ի Տփղիս քաղաքի:

Գտի նաեւ գգիւրք իմն՝ ուր գոյ Խորենացւոյ Պատմութիւն եւ Սաւուել Երիցու եւ Ստեփաննոսի Տաքօնեցւոյ, որ Ասողիկ եւս կոչի: Գտի եւ մի Մեկնութիւն Երզերգոցի նարեկացւոյն:

Գտի եւ մի գիրք յորում թէպէտ բազում այլեւայլ բանք, բայց Մխիթարայ Գոշի Առակքն եւս ճՂ թուով անտանօր գրեալ: Եւ մի ճառ ի վերայ Լուսաւորչին, Վարդանայ Բարձրեբրդցւոյ արարեալ: Եւ մի հին Յիսուս Որդի, յորում Եղեսիոյ ողբ, եւ Բարձրացուցէֆի ստանաւորն, եւ քովեւս ոտանաւոր ի վերայ Շնորհալուոյն, եւ Յոհաննու Երզնկացւոյն՝ Ոտանաւորք ի վերայ երկնից:

Հանդիպեցայ ումեք ի ճանապարհի ի գարձին Կիսում, յորում ես յայտնոյս եւ նա յայնկոյս գնայր, եւ տեսի առնթեր նորին մի Պատմութիւն Յոհաննու Կաթողիկոսին, գրեալ ի Բաղէշ, ի ՌՃԼԸ թրւակահին Հայոց, զոր էր տուեալ գրել Վարդան Վարդապետն Բարիշեցի. զոր առեալ դիտեցի զԱռաջարանութիւնն, եւ գտի նոյնպէս պակաս: Եւ ոչ այս միայն, այլ եւ միջին պակասքն եւս նոյնօրինակ. վասն որոյ լքայ: Բայց այսու ամենայնիւ կրկին զօրացեալ դոմանս բանս ի սկզբանէ մինչեւ ի վերջն ըստ հապճեպ եւ թուոյ ժամանակին՝ գրեցի ի վերայ քանի մի տետրից, զորս առաքեցից ընդ միւսոցն:

Գտի մի հին Եղիշէի Պատմագիրք, եւ քանզի ընդ Վա տարեալ էի դտպեալն՝ ուղղագրեցի, յորում թէ որչափ վրիպութիւնք տւողեցեալ ի լոյս ածան, ի ժամանակի անդ յորժամ ընթերցեալ լինի ի ձէնջ՝ բացերեւակի ծանուցեալ լիցի:

Գտի ի տեղի ուրեք եւ մի Ագաթանգեղոս, եւ զայն եւս ընդ տըպելոյն բարդատեալ՝ տւողագրեցի:

Գտի նաեւ գմի Բուզանդ Պատմագիրք, եւ գնոյն եւս համեմատեալ՝ ուղղագրեցի, եւ չակերտիւք կամ այլ նշանիւք ի լուսանցան նշանակեցի, զոր տուք բարուք ճանաչէք. տղ լեբուք:

Եւ ի մտի ունիմ գնել գոռաս ի անտի իմիք եւ յանձնել ոչ այլում ումեք, քան թէ Ինճիճի Միքայէլեան Պօղոս Աղային, լուելեայն, զի նա առ ձեզ հատուցէ, որպէս թէ առ որդիսն իւր յղէ: Բայց նախ դատար պատասխանին հայցեմ ի ձէնջ, զի առ նա եւ առ իս յղիցէք, եւ թղթով նմա ծանուցանիցէք, զի ինքն ձեռամբն իւրով զթուղթն ինձ տացէ, եւ մի՛ ի ձեռն այլոյ յղիցէ, իբր զի եւ ես դնտուկն նմա տաց ի յղել:

Ի Բիւզանդիոն  
1782, յՕգոստոսի 15

Ծառայ Տեառն  
Գէորգ չնչիմ

(Յ. Գ.) Զսուրբ աջն գերյարգոյ Արքայ Հօրն համբուրեալ զօրհնութիւն հայցեմ:

16.

Գերապատիւ Հօր իմոյ Ստեփաննոս Վրդ.ին Ազոնց  
դՍուրբ Աջն համբուրեմ

Ընկալայ զթուղթն ձեր յեթներորդումն ամսեանն Յունիսի, եւ ընթերցեալ տեղեկացայ նիւթոցն գրելոց ի նմա, զորոց պատասխանին ըստ կարի նախ քան զայս գրեալ եւ յղեալ էի առ ձեզ, ձեռամբ Պօղոս Աղային. թէպէտ չէր ժամանեալ տակաւին՝ վասն մնալոյ եւ անազանելոյ գրոյն աստանօր ընդ տապանակի գրեանցն, յորմէ ըզպատասխանին այսր թղթոյ եւս լիելի կարէք իմանալ:

Եւ միւս եւս վասն Աստուածաշնչի միոյ՝ գրեալ ծանուցեալ էի ձեզ նովին թղթով, զոր տակաւին ցայնժամ ոչ էի տեսեալ, եւ ապա տեսի եւ համեմատեալ ընդ տպելոյն ի տեղիս փնջ՝ գտի լաւ օրինակ, որ եւ մնաց առ իս աւուրս ինչ, ակն ունելով իմ՝ գրութեան պատասխանոյն առ ի ձէնջ. ապա ի ստիպելոյ տեսուն իւրում ի ձեռն միջնորդին՝ հարկ եղեւ մեզ յանձն առնուլ զքնելն. քանզի եւ այլ ոք յայտ եկեալ եւ յօժարեալ ի գնել, այնպէս արձանագրեալ կայր, ոչ վասն իրին, զորմէ ոչ էր փոյթ նմա, այլ յարագա ոսկեզօժ գեղանկար բոլորագիր եւ մագաղաթեայ գոլոյն. վասն որոյ դնեալ առաք զնոյն 350 մասչիլ արծաթոյ, ճիշտ սակարկութեամբ եւ բազում ջանիւք միջնորդին՝ բարեկամի իմոյ. քանզի միտ մատենի տեսուն միտեալ էր տալ միւս խնդրողին, որ էր առաւել մերձաւոր իւր, եւ թէպէտ չտնէաք առ ժամն պատրաստ այնքան դրամ, բայց աստի եւ անտի դալակեալ ճար արարաք եւ հատուցեալ վճարեցաք, եւ է այժմ առ մեզ, որ եւ գրեալ է յարեւելս պարսից, ի քաղաքն Սպահան, որոյ գրչութիւն թէպէտ չէ կարի հնագոյն, բայց օրինակն ուստի հանեալ է՝ հնագոյն լեալ է: Արդ, զինչ եւ իցէ մեք այսպէս արարաք, եւ դուք եւս գձերն արարեալ, ազդ արասջիք Պօղոս Աղային, որ ըզմատեանն գեղեալն յինչն ի տապանակի, առեալ լուումու եւ անչչունջ առ ձեզ յղեցէ: Եւ ողջ լեր ի պարծանս իմ, որ եմ

նուաստ ծառայ Տեառն  
Գէորգ Տ. Յոհաննիսեան

Ի Բիւզանդիոն  
ՌՄԼԲ (1783) Յունիսի 8

17.

Գերամեծար Հօր իմոյ Ստեփաննոս Վարդապետին  
դՍուրբ Աջն համբուրեմ եւ զօրհնութիւնն հայցեմ

Գիտութիւն լիցի յարգութեանդ, զի գտեսրական Տիրացու Աւետիքին՝ ես գրեցի հինգ տետր, զոր առ ձեզ առաքեաց՝ ըստ խնդրե-

րոյ ձեռք, որոյ եւ կարճատուտ տրակն եւս յինէն գրեցաւ. բայց դուք մի՛ երբեք զիտիցէք զայս աշտպէս լինել, այլ ի վթղթին յորժամ վասն ժամանակն տեստրակացն գրիցէք ինչ նմա, երբեք ծանօթութիւն մի՛ տայք, եւ մի՛ նաեւ զանուն իմ յիշխցէք. որչ լերուք:

Դարձեալ եւ զայլ բան աղաչել կամ իմ եւ յերես անկեալ աղերսեմ, զի զանուն Պատմական գրոցն Ղազարու Փարսեցունցն՝ զամս բազումս մի՛ ի զուրս հանիցէք թէ ունիք, եւ մի՛ ի նմանէ բանս ի գիր վարկազակի արձանացուցանէք. քանզի աստանօր ի վեր ելանէ բանն՝ թէ ես յղեալ եմ, եւ զուցէ վնաս եւս ինձ լինիցի: Վասնզի որ ետն ինձ զօրինակ նորին աստ եկեալ, աստ եւ անդ հոչակեաց՝ թէ ամա ետու ես գիրք մի այս անուն եւ օրինակեաց: Վասն որոյ եւ յինէն խնդրեցաւ օրինակն տեսանել, եւ եթէ լաւագոյն իր իցէ՝ ի տիպ տալ: Ապա ես պատճառանս յօղեցի եւ վաճառեալ եմ ասացի, եւ այլ բանս, եւ հաղիւ զօճիս իմ զերծուցի. զորոյ անունն եթէ հուպ ընդ հուպ յայրմ կողմանէ ի գիր արձանացեալ տեսանիցեն, իբրեւ զմի ոք ի հեղինակացն՝ զոր ի շարտասանութեան կամ ի Քերականութեան եղեալ էք, ապա յետ այնր կարծիք նոցին աստուղի եւ ես պախարակ լինիմ, եւ եզերումն առնու այնուհետեւ ստացուած աշտպիսի գրոց: Դուք իմաստունն էք, ի սակաւ բանէ աստի զբազումս Վիմարիք: Ողջ լերուք:

Քրիստոսի ծառայ  
Գեորգ ամարժան Տէր Յովհաննէսեան

Ի Կոստանդնուպօլիս  
(1783) ի Նոյեմբերի 20

(Յ. Գ.) ՉՍուրբ Աջն գերյարգոյ Աբբայ Հօրն համբուրեմ:  
(Հասցէ) Աստուծով հասցէ ի ձեռս գերաւեծար Ստեփաննոս Վարդապետին Ազոնց:

18.

Գերապատիւ Հօր իմոյ Ստեփաննոս Վրդ.ին զՍուրբ Աջն սիրով եւ բաղձանօք համբուրեալ, եւ զորպիսութիւն արդի վեցութեանն հարցեալ զօրհնութիւնն հայցեմ

Յետ որոյ զխտաթիւն իրցի յարգութեան ձերում, զի ըստ յառաջագոյն զրով ազդելոյն ձերոյ ինձ, ընկալայ զԱստուածաշունչն ի ձեռաց Պօղոս Աղային, յամսեանն Յունվարի, եւ կալայ առ իս ի պատրաստի, որպէսզի ըստ ակնկալութեան իմոյ՝ եթէ դէպ լիցի:

Աստուածաշունչին հանդիպել, անտի ի տպեալն դտարբերութիւնն նըշանակեալ՝ առ ձեզ յղել ոչ դանդաղեցայց: Բայց այս միայն գոյ՝ զի ժամանակի կարօտ է, եթէ՛ գիւտն եւ եթէ՛ կատարումն, վասն լինելոյս միայնակ եւ անօղնարկան, քանզի եւ իրն լուծեամբ գործելի է եւ ոչ լու ի լու, մանաւանդ սովորութիւն քուսոյ բարուցս իմոց՝ մեծապէս զիս տիպէ դանչունջն սիրել. որչ լեր:

Գերյարգոյ Աբբայ Հօրն համբուրեմ զՍուրբ Աջն եւ զօրհնութիւնն հայցեմ: Գերապատիւ Հայր Սուրբիսին եւ Հ. Աղեքսանդրոսին եւ Հ. Ղուկասին՝ համբուրեմ զՍուրբ Աջն:

Գեորգ Տէր Յովհաննէսեան  
ծառայ Տեառն

Ի Ըստամպօլ  
ՌՄՂԳ (1784) Փետրվարի 22

19.

Գերապատիւ Հօր իմոյ Ստեփաննոս Վրդ.ին զՍուրբ Աջն համբուրեալ զանուշակ որպիսութիւնն սիրով հարցանեմ

Ընկալայ զտրակն յարգութեանդ ի 26երորդումն Մայիսի, որ էր գրեալ ի 23երորդն Ապրիլի, եւ մտառու վերջանութեամբ տեղեկացայ գրելոցն ի նմա, զի վասն գրով ազդելոյ իմոյ ձեզ՝ մատենագիրն պահանջեալ է ի գործ զնելոյ զմշտայիչելի աշխատութիւնն իւր:

Սակայն մի՛ երբեք կասեալիք ի քարուք առաջադրութենէ մըտացն ձերոց, որք հանապազ վասն շինութեան ազգին մերոյ քրտունս թափէք, եւ զաղաւաղեալ անուն եւ զգործս նորին՝ ի լոյս հանել ոչ երբեք դանդաղիք, իբրեւ ստոյգ սրտացաւք եւ մտերիմ հոգածուք լաւանալոյ նորին. վասն որոյ եւ զանուն եւ զբան այնր հեղինակի եւս՝ մեծաւ վատահութեամբ գի՛ք ի կարգի նորոգ մատենին, իբրեւ թէ ունէիք վայն դուք առ ձեզ ի հերուն հետէ. քանզի այն մատենն աստանօր տպագրիլ չունի. եւ ոչ իսկ յետ միանգամ հարցանելոյ ինձ տուողի օրինակին՝ այլ եւս հարցումն արար: Ես զայնմանէ ձեզ յայնժամ վասն այն ազդ արարի, զի որովհետեւ գձարտասանութիւնն<sup>1</sup> եւ մանաւանդ գՔերականութիւնն<sup>2</sup> տեսի, որք լի եւ հո՞՞ն անուամբք բազում հայ վարդապետաց, եւ չիք ուրեք յիշումն անուան սորին ի նոսին. մի՛ գուցէ վարկանիցի յոմանց ի նոցանէ՝ թէ այն նորոգ ի ձեռս ձեր եկեալ հասեալ լիցէ, եւ զիս կարծիցեն լինել առաքիչ նորին. եւ աշտպէս ապա այլ եւս ասանալի իրաց (որոց միշտ արթուն մտօք զննիչ եւ որոնող եմ) վնաս ինչ լիցի, եւ ոչ կարողացայց ի ձեռս բերել:

Սակայն դուք ամենեւին ապահով չեք ուր, զի անուն ձեր մեծ է առ ամենեւին, մինչեւ առ հակառակորդսն եւս, եւ զարմանան մեծապէս ընդ լաւ յառաջադիմութիւնն ձեր, եւ բազում ուրեք ի բազմաց լուեալ եմ՝ թէ յոյժ ճոխացեալ է յոլովութեամբ գրեանց դրատունն Մխիթարեանց. եւ մանաւանդ Սամուէլ Վրդ.ն<sup>3</sup> ասէ միշտ ամենեցուն բազում գովութեամբ զպայծառ բարեկարգութենէ Մենաստանիդ եւ զճոխութենէ դրատանն ձերոյ, լու ի լու՝ թէ ես զդրոց յոլովութիւնն զոր անգէն տեսի՝ ոչ տեսեալ եմ ուրեք երբեք, ո՛չ յէջմիածին եւ ոչ աջուր: Վասն որոյ ոչ օրինակել պիտի եւ ոչ աստ առաքել, զի աւելորդ աշխատութիւն է այն եւ չունի պտուղ ինչ. միայն թէ մի՛ նահանջիցիք զառաջադիր գործն ի պլուս տանելոյ, մանաւանդ զի մինչեւ յամս երկուս կամ ուղտն կամ ուղտապանն, որպէս ասի:

Արդ՝ մի՛ կասիցիք ի գործոյն, որ մեծ լուսաւորութիւն է ազգին մերոյ, եւ ձեզ առաւել եւս նիւթ պարծանաց՝ ընդ այլ բազում մեծագործութիւնսն, զորս ի վերջին ժամանակս արարիք, եւ զլեզուն մեր յոտին կանգնեցիք, եւ զվաստակս աշխատութեան ընտիր արանցն Հայոց՝ արդիւնացուցիք, եւ սհախական լեզուն լրիւ կատարելագործեցիք:

Եկեսցուք արդ ի բան կարծիկ Մանուէլին: Արդարեւ նա բազում մուրողութեամբ գրքոյկս շարադրեաց ի հայկական եւ ի տաճկական բարբառ, աղճատեալ ամենեւին՝ եւ ի անլուր մորտութեամբք եւ դիւական մոլեգնութեամբ, մինչեւ ինքեանց խակ քաղմաց անհաճոյ երեւիլ եւ զգուելի, որովք յիրաւի եւ Հայոց երեղեցւոյն ներհակի<sup>4</sup>: Եւ արդարեւ արժան է բան առ քան մորտութեանցն նորա ակն յանդիման առաջի աչաց զնիլ, զի ծանիցէ՝ թէ զո՛յ Յդիա յիսրայէլի, սատակիչ սուտ մարդարէիցն Բահադու. որպէս եւ երբեմն յարգելի ոք ի Միաբանութենէ ձերմէ՝ արարեալ նմա, զամս բազումս կարկեցոյց զլեզու նորա, որոյ ապա լուր վախճանին՝ զարձեալ շարժեաց զնա յայսպիսի մոլար գործառնութիւնս. որում եւ սուք այժմ եթէ զնոյն առնիցէք, որպէս նայն արար, յոյժ զիւրադոյն իմն է, եւ ոչ ծաղի աստ խոսովութիւն ինչ յազգի մերում. քանզի նեղութիւնն ըզգաստացոյց գնոսա: Բայց ես զընդ վայր ծախումն ժամանակին աւաղեմ, եւ ոչ համարիմ զնա ձեզ հաւասարակից, զի ընդդէմ նմին ախոյեան ելանիցէք եւ զօտեմարտիցիք, որ ի յետին աստիճանի աղկաղկ իմն է, եւ ըստ արտաքին երեւութիւն՝ երկրորդ Թէրախոյն, եւ այլ ոմն էսո(ւ)բօս, թէպէտ եւ ոչ նման նմին օգտակար առակաբան, այլ շարաիրատ եւ խայտառակաբան: Բայց թէ ա՛յլ տարազ քան խորհիք դուք, եւ բանից նորին պատասխանի առնելն ճարձ վարկանիք վասն շինութեան միամտացն, եւ այն եւս բարուք է, արարէ՛ք. անտի վնաս ինչ ոչ ծաղի. որջ լերուք:

Գերյարգոյ Աբբայ Հօրն զՍուրբ Աջն Համբուրեմ եւ զօրհնութիւնն հայցեմ: Վ. Հ. Աղէքսանդրին եւ Վ. Հ. Ղուկասին՝ որջոյն սիրոյ ընծայեմ:

Ժառայ Տեառն  
Գեորգ չնչին Տէր Ովանիսեան

Ի Կոստանդնուպօլիս  
Յամի Տեառն 1784, ի Մայիսի 27

1. Հ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱԳՈՆՑ, Ճարտասանութիւն, սպ. Վենետիկ, 1775:
2. Հ. ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄԶԵԱՆ, Քերականութիւն Հայկագեան լեզուի, սպ. Վենետիկ, 1780:
3. Սամուէլ Եպ. Երզնկացի (Լաճեան), որ կը ճանչցուի Աղու մականունով, Երկար ստան մնացած է Հոռոմ՝ իբր ձեռնադրիչ եպիսկոպոս: Այցեւած է Վենետիկ, եւ լաւ տպաւորութիւններով հեռացած՝ Ս. Ղազարէն:
4. ՄԱՆՈՒԷԼ ՍՐՄԱՔԷՇ ԿԵՍԱՐԵԱՆ (ԿԱՐՃԻԿ), Տետրակ որ կոչի գաւազան կրկնագօր, սպ. Պոլիս, 1780:

Résumé

GÉORG DPIR TÈR HOVHANNISEAN (PALATEC'I)  
ET LES MEKHITARISTES

P. SAHAG DJEMDJEMIAN

Dans le fascicule précédent de *Bazmavep*, l'A. avait publié une longue étude détaillée sur les relations entretenues, avec les Pères Mekhitaristes de Venise, par le célèbre intellectuel constantinopolitain de la seconde moitié du XVIII<sup>e</sup> siècle, Gëorg Dpir Tër Hovhannisean de Palat, un quartier dans la vieille ville de la capitale ottomane. L'A. publie maintenant l'ample correspondance de Gëorg avec les Pères de St. Lazare en y ajoutant de brèves notes historiques et philologiques. Cette correspondance qui a constitué la base de l'étude du Père Djemdjemian, est une source de grande valeur pour l'histoire des manuscrits et de certaines éditions arméniens, surtout de ceux qui, donnés par Gëorg, ont été recueillis par la suite dans la bibliothèque de St. Lazare.